ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

«02» 12 2019թ.
N: 01/19/10335-19

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10

Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոնի
Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի
ղեկավար պարոն Ս. Մարտիրոսյանին

Հարգելի պարոն Մարտիրոսյան

ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրած 14.11.2019թ. թիվ Մ-17152-2019 գրության վերաբերյալ տեղեկացնում ենք.

Ձեր գրությանը կից ներկայացված զեկույցում նշված մարզի առանձին համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման աշխատանքներում տեղ գտած թերությունների հարցը քննարկվել է համապատասխան համայնքների ղեկավարների հետ:

Քննարկման արդյունքում առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ միջոցներ ձեռնարկել արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ:

Ձեռնարկված միջոցների արդյունքում պաշտոնական համացանցային կայքերում տեղադրվել են՝ Մարմաշեն և Ախուրյան համայնքների 2019 թվականի բյուջեների ծախսերի պլանները, Ոսկեհասկ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, Պեմզաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականներն ու եկամուտների պլանը:

Գյումրի համայնքի ղեկավարի որոշումները տեղադրված չեն, քանի որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթների, համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինեն՝ ոչ թե համայնքի ղեկավարի ընդունած բոլոր իրավական ակտերը, այլ միայն նորմատիվ իրավական ակտերը:

Արթիկ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի 2018 թվականի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունն ավագանու նիստին

ներկայացնելը ժամանակավրեպ է: Մեր կողմից առաջարկվել է Արթիկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ավագանու նիստում քննարկման ներկայացնել զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ 2019 թվականի, ինչպես նաև հաջորդող տարիների հաշվետվությունները «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում և ընդունված որոշումը տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Ոսկեհասկ, Ազատան և Արփի համայնքների պաշտոնական համացանցային կայքերում բյուջեների եկամուտների և ծախսերի կատարողականների բացակայությունը պայմանավորված է կայքերի վարման հետ կապված մի շարք տեխնիկական խնդիրներով: Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության ու «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերլուծության կենտրոն»-ի հետ աշխատանքներ են տարվում՝ առկա խնդիրները վերացնելու ուղղությամբ, որից հետո միայն հնարավոր կլինի կայքերում տեղադրել անհրաժեշտ տեղեկությունները:

Ոսկեհասկ համայնքի 2018 թվականի բյուջեն, ինչպես նաև բյուջեի հաստատման մասին ավագանու որոշումը տեղադրված չեն, քանի որ համայնքի պաշտոնական համացանցային կայքը գործարկվել է միայն 2018 թվականի ապրիլ ամսից:

Միաժամանակ հայտնում ենք, որ հետայսու մեր կողմից մշտապես մոնիթորինգ կիրականացվի համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման նկատմամբ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին կցուցաբերվի աջակցություն՝ համայնքների պաշտոնական համացանցային կայքերը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան շահագործելու ուղղությամբ:

Հարգանքով՝

X

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կապ. Ս. Գրիգորյան
Հեռ. 0312 4 90 00 157